Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի
«Այգաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի
մայիսի «16»-ի N 15-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.Հոգեբան.-0.5 դրույք /60000 ՀՀ դրամ աշխատավարձ/: | 1)**Որակավորման պահանջները**<br>1.Հաստատության հոգեբանի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն։<br><br>**2) Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնները զբաղեցնող անձը պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները։ | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի փողոց 9, 36շենք, Այգաբաց մանկապարտեզ: Օրը՝2025թվականի հունիսի 19-ին ժամը՝11:00** | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի 9 փողոց, 36 շենք Հեռ՝ 094078363 Էլ.հասցե aygabatsmankapartez@mail.ru Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր: Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ **https://escs.am/am/news/11978:** | | **2025 թվականի մայիսի 16-ից մինչև 2025թվականի հունիսի 13-ը ներառյալ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:<br><br>Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում: | | |